Կարգապահական գործ թիվ ԿԳ-23014

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Սիմիդյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 944), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Իսակ Դիլանչյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով ՀՀ փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ)**, հայտնել է, որ 21.05.2022թ.–ին փաստաբան Կարինե Սիմիդյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան)** հետ կնքել է փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Նշված Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Փաստաբանը պետք է դիմեր գումարի բռնագանձման պահանջով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և բողոքարկեր քննչականում նախաքննության կողմից կայացրած որոշումը:

Դիմողի պնդմամբ, Կարինե Սիմիդյանին վճարել է ընդհանուր 540.000 ՀՀ դրամ, սակայն նա պայմանագրում գրել է 400.000 ՀՀ դրամ՝ պատճառաբանելով, որ 140.000 ՀՀ դրամի չափով պետք է կատարի պետական տուրքի վճարումներ և հավաստիացրել, որ կներկայացնի անդորրագրերի պատճենները:

Ըստ Դիմողի՝ Պայմանագիրը կնքելուց հետո 10 ամիս է անցել, սակայն մինչ օրս Փաստաբանը որևէ գործողություն չի կատարել, իր զանգերին չի պատասխանում, իսկ հազվադեպ պատասխանելուց էլ հայտնում է, որ գործն ընթացքի մեջ է:

Դիմողը իր դիմումում նշել է, որ «Datalex» դատական տեղեկատվական համակարգի

միջոցով փորձել է գտնել իր իրավական պահանջի վերաբերյալ գործը, սակայն որևէ գործ առկա չի եղել: Վերջինս այցելել է Փաստաբանին և փորձել պարզել թե դատական տեղեկատվական համակարգում ինչի իր պահանջի վերաբերյալ դատական գործ առկա չէ, Փաստաբանը Դիմողի հարցադրումից բորբոքվել է և ասել, որ գործը ընթացքի մեջ է, և որ 18.12.22թ–ին հայտը կներկայացնի դատարան:

Իրեն կրկին խաբված զգալով՝ Դիմողը ստիպված գրավոր նամակ է ուղարկել Փաստաբանին, գործի ընթացքի վերաբերյալ տեղեկանալու համար, սակայն վերջինիս պնդմամբ մինչ դիմում բողոքի ներկայացման օրը Փաստաբանից պատասխան նամակ և զանգ չի ստացել:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.05.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողի կողմից որևիցե ապացույց չի ներկայացվել:

Հետագայում Դիմողը 29.05.2023թ. ներկայացրել է բացատրություն, որով ըստ էության պնդել է իր դիրքորոշումը՝ հավելելով, որ ինքը Փաստաբանին տվել էր բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հայցադիմում կազմելու և ներկայացնելու համար: Տևական ժամանակ Փաստաբանի կողմից անգործություն ցուցաբերելու պատճառով Դիմողը ցանկացել է նրա ծառայություններից հրաժարվել, ինչից հետո միայն Փաստաբանը 25.11.2022թ. հայց է ներկայացրել դատարան, սակայն դրա ընդունումը մերժվել է:

Դիմողը նաև հավելել է, որ Պալատ դիմում մուտք անելուց հետո, Փաստաբանը կրկին որոշել է հայցադիմում ներկայացնել և 02.03.2023թ. դատարան մուտք է արել հայցադիմում՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությամբ, որը դատարանի կողմից մերժվել է, իսկ հայցը վերադարձվել է:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Իսակ Միքայելի Դիլանչյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի մարտի 7-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Իսակ Դիլանչյանի կողմից 06.05.2023 թվականին իրեն տրվել է լիազորագիր, իսկ 21.05.22թ–ին կնքվել է պայմանագիր, համաձայն որի պետք է դատարան դիմեր գումարի բռնագանձման և նախաքննության կողմից կայացրած որոշումը բողոքարկելու պահանջներով:

Պայմանագրի գումարի վճարը կազմել է 400 000 ՀՀ դրամ, որն իր մեջ ներառել է ներկայացուցչություն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում: Քանի որ դիմումատուն գտնվել է նյութապես ծանր վիճակում, խնդրել է որպեսզի գումարը վճարի մաս-մաս, որին Փաստաբանն ընդառաջել է: Բացի այդ

Փաստաբանը Դիմողին հայտնել է, որ նշված գումարի բռնագանձման պահանջով պետական տուրք պետք է վճարի, որը չի մտնում ծառայությունների մատուցման պայմանագրի մեջ: Փաստաբանի պնդմամբ, բավականին ուշ է վճարել՝ հայտնելով, որ գումար չունի /վճարել է 140.000 / ՀՀ դրամ: Փաստաբանն ի սկզբանե դիմումատուին հայտնել է, որ փաստաբանը որևէ երաշխավորություն չի տալիս գործի ելքի վերաբերյալ, որի մասին նաև նշված է պայմանագրում: Բացի այդ դիմումատուն մինչ ստորագրելը կարդացել, ծանոթացել և ստորագրել է Պայմանագիրը, որ փաստաբանի մատուցած ծառայություններից կամ գործի հետագա ընթացքը շարունակելուց հրաժարվելու դեպքում, պայմանագրով նախատեսված ծառայության վճարը ենթակա չէ ետ վերադարձման:

Ըստ Փաստաբանի հայտնած տեղեկատվության՝ Իսակ Դիլանչյանի և պատասխանող Սարգիս Ապրեսի Թադևոսյանի միջև 16.04.2021 թ-ին կնքվել է փոխառության պայմանագիր՝ մինչև 30.11.2021թ–ը մարման ժամկետով: Մինչ դատարան դիմելը պարտապանի հասցեով ուղարկել է գրավոր նախապահանջ՝ առաջարկելով մինչև 2022թ–ի հուլիսի 31-ը կատարել ստանձնած պարտավորությունները /կից ներկայացվել է նախապահանջի օրինակը, հետադարձ ծանուցման անդորրագիրը/: Որոշ ժամանակ անց դիմումատուն Փաստաբանին հայտնել է, որ պատասխանողը ժամանակ է խնդրել որպեսզի գումարը վճարի մաս-մաս:

Ըստ Փաստաբանի՝ Դիմումատուն տարբեր հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար այդ ամիսների ընթացքում զանգել է իրեն, այցելել իր գրասենյակ և ստացել անվճար իրավաբանական խորհրդատվություններ տարբեր հարցերի շուրջ, տարբեր գործերով:

Վերջինիս պնդմամբ Փաստաբանը Դիմումատուին հայտնել է, որ գործը գտնվում է ընթացքի մեջ և անգամ հայտնել է, որ վ/կ է ներկայացրել դատարան և Դիլանչյանին համակարգչով ցույց է տվել Datalex.am ներկայացված պահանջը:

Ըստ Փաստաբանի՝ քանի որ վ/կ մերժվել է, Դիմողին տեղեկացրել է, որ գ/պ դիմել է դատարան և ներկա պահին այն գտնվում է դատարանի վարույթում՝ գործ թիվ ՇԴ/1950/02/23:

Փաստաբանը նշել է նաև, որ Դիմումատուի կողմից իրեն մեղսագրվող վարքագիծը տեղի է ունեցել 2022 թվականի մայիս ամսին, այսինքն՝ ՀՀ փաստաբանների պալատ դիմում ներկայացնելուց 10 ամիս առաջ, ինչը թույլ է տալիս պնդել, որ նման պայմաններում կարգապահական վարույթ չի կարող հարուցվել::

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.05.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանի կողմից որևիցե ապացույց չի ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 16.03.2023թ. թիվ 77-Ա/ԿԳ-23014 որոշմամբ փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև

Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.5.5, 3.6.1 և 3.8.4 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

22.03.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 22.05.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ 21.05.2022թ. կնքված պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պետք է դիմեր գումարի բռնագանձման պահանջով առաջին ատյանի դատարան: Տրված հանձնարարության կատարման ապահովման նպատակով Փաստաբանի կողմից **20.07.2022թ.** ներկայացվել է Սարգիս Թադևոսյանին հասցեագրված նախապահանջ, ինչպես նաև առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան **02.03.2023թ. (նախապահանջը ուղարկելուց հետո՝ 8 ամիս անց)** ներկայացվել է հայցադիմում՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, դատարանի 14.03.2023թ. որոշմամբ մերժվել է Դիմողի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, իսկ հայցադիմումը վերադարձվել է:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.08.2023թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, Դիմողի և Փաստաբանի միջև 21.05.2022թ. կնքված պայմանագրով, ինչպես նաև 06.05.2022թ. լիազորագրով:*

2. Դիմողը վճարել է Փաստաբանին ծառայությունների մատուցման պայմանագրի գումարը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

3. 21.05.2022թ. կնքված պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պետք է դիմեր գումարի բռնագանձման պահանջով առաջին ատյանի դատարան: Տրված հանձնարարության կատարման ապահովման նպատակով Փաստաբանի կողմից **20.07.2022թ.** ներկայացվել է Սարգիս Թադևոսյանին հասցեագրված նախապահանջ,

ինչպես նաև առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան **02.03.2023թ. (նախապահանջը ուղարկելուց հետո՝ 8 ամիս անց)** ներկայացվել է հայցադիմում՝ գումարի բռնագանձման պահանջի մասին[1]: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված նախապահանջով, դրա ստացման ծանուցագրով, ինչպես նաև թիվ ՇԴ/1950/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

4. Դատարանի 14.03.2023թ. որոշմամբ մերժվել է Դիմողի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, իսկ հայցադիմումը վերադարձվել է: *Նշված փաստը հաստատվում է թիվ ՇԴ/1950/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. Դիմողի և Փաստաբանի միջև 21.05.2022թ. կնքված պայմանագիրը լուծվել է: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված 13.02.2023թ. գրությամբ: Ավելին, նշվածի չի հերքվել Փաստաբանի կողմից:*

6. Չնայած նրան, որ Փաստաբանը պայմանագրերի շրջանակներում ըստ էության ամբողջ ծավալով չի կատարել իր պարտականությունները, այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետը փաստացի հղում է կատարում փաստաբանի և վստահորդի միջև կնքված պայմանագրին: Այսպիսով, Փաստաբանի և Դիմողի միջև կնքված պայմանագրերի 4.2 կետով նախատեսված է Պայմանագիրը լուծելու դեպքում վճարված գումարը չվերադարձնելու դրույթը: Նման պայմաններում, Փաստաբանի կողմից փաստացի չկատարված աշխատանքի դիմաց վճարված գումարը Դիմողին չվերադարձնելու հարցը գտնվում է Կանոնագրքի կարգավորման տիրույթից դուրս: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 21.05.2022թ կնքված պայմանագրով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կարինե Սիմիդյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009 թվականից, և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում ունի 3 կարգապահական տույժ (տույժերը ուժի մեջ մտած չեն):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ Օրենքի Կանոնագրքի 3.6.1 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշների խախտման մասով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված*

[1] **Փաստաբանի կողմից կատարված վերջին գործողությունը:**

կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.*

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների

առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Մասնավորապես, անդրադառնալով Փաստաբանին վերագրվող վարքագծին, անհրժեշտ է նկատի ունենալ, որ Փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերությունների որոշակիությունից և կանխատեսելիությունից ելնելով՝ որպես իրավական երաշխիքներ, բարեխղճ և արդյունավետ հանձնարարության կատարման ապահովման պարտավորությունից բացի, Կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են նաև հանձնարարության կատարման ընթացքում վստահորդին կանոնավորապես տեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին պատասխանելու, ինչպես նաև պայմանագիրը լուծվելու դեպքում որոշակի գործողությունների կատարմանը հետամուտ լինելու պարտականությունը՝ մասնավորապես, պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, վստահորդին կամ պատվիրատուին, ինչպես նաև հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը վստահորդին վերադարձնելու մասով:

Հարկ է նաև հավելել, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետն իր հերթին, փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում որոշակիություն և կանխատեսելիության համատեքստում՝ որպես իրավական երաշխիք՝ ի թիվս այլնի, նախատեսում է պայմանագիրը լուծելիս որոշակի գործողություններ փաստացի կատարված չլինելու դեպքում հոնորարի մի մասը վերադարձնելու փաստաբանի պարտավորությունը, ***եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:***

Այլ կերպ ասած, Կանոնագրքի նշված դրույթի կարգավորման կիրառման համար անհրաժեշտ է որոշակի վավերապայմանների միաժամանակյա առկայությունը՝ մասնավորապես,

1. *Փաստաբանի և վստահորդի միջև* ***պայմանագիրը լուծված լինելը,***
2. *Փաստաբանի կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում* ***որոշակի գործողություններ կատարված չլինելը,***
3. *վճարված գումարը վերադարձնելու* ***հարցը պայմանագրով կարգավորված չլինելը****:*

Տվյալ դեպքում, Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է հանձնարարության կատարման ընթացքի մասին վստահորդին կանոնավորապես չտեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին չպատասխանելու, ինչպես նաև պայմանագիրը լուծելիս պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք, վստահորդին չվերադարձնելու վարքագիծը:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնելուց հետո Փաստաբանը ձեռնարկել է որոշակի գործողություններ, ինչի մասին Դիմողը տեղեկացված է եղել:

Միաժամանակ, չնայած Դիմողը որոշակի տեղեկություններ չի ստացել Փաստաբանից իր գործի ընթացքի վերաբերյալ, այնուամենայնիվ, վերջինիս բացատրության բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ նա փաստացի կապ է հաստատել Փաստաբանի հետ, որպիսի պայմաններում Դիմողի պնդումներն այս մասով որոշակի հակասություններ են պարունակում: Ավելին, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, որ Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որը ողջամտորեն կվկայեր այն մասին, որ Փաստաբանն ըստ էության չի պատասխանել իր զանգերին:

Բացի այդ, Դիմողի և Փաստաբանի միջև կնքված Պայմանագիրը փաստացի լուծված լինելու պայմաններում, Հանձնաժողովն՝ անդրադառնալով կարգավորումներին, անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ դրանում առկա դրույթները փաստացի կարգավորում են պայմանագիրը լուծելու դեպքում գումարի վերադարձմանը վերաբերող հարցերը:

Մասնավորապես, նշված հարցն ուղղակիորեն կարգավորված են **Պայմանագրի** 4.2. կետի համաձայն՝ *Պատվիրատուի կողմից, մինչև գործի վերջնական ավարտը, Կատարողի մատուցած ծառայություններից կամ գործի հետագա ընթացքը շարունակելուց հրաժարվելու դեպքում, սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված ծառայության վճարը ենթակա չէ ետ վերադարձման:*

Այս համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետով ամրագրված պահանջի պահպանման հարցի քննարկումն ըստ էության դուրս է գալիս Կանոնագրքի կարգավորման տիրույթից, քանի որ առկա է նշված կանոնի կիրառումը բացառող պայմանը: Այսինքն, Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագրի շրջանակներում նշված հարցի կարգավորված լինելն արդեն իսկ բացառում է Փաստաբանի վարքագծում այդ ենթակետով սահմանված խախտման հատկանիշների առկայության կամ բացակայության քննարկման հնարավորությունը:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև գործում առկա ապացույցները իրենց համակցությամբ, Հանձնաժողովն արձանագրվում է, որ Փաստաբանին վերագրվող Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջի խախտման մասով բացակայում են դրա առերևույթ հատկանիշները, որպիսի պայմաններում էլ հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը: Ինչ վերաբերում է Կանոնագրքի 3.8.4 ենթակետին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ նշված կարգավորման կիրառման տրամաբանության ներքո բացակայում են դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը, որպիսի պայմաններում էլ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքներին և Փաստաբանի արարքի գնահատմանը անդրադարձ չի կատարվում և դրանք ենթակա չեն քննարկման:

7.2. Միաժամանակ, փաստաբան Կարինե Սիմիդյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Այդ կապակցությամբ, փաստաբանի համար Կանոնագրքով սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, պարտականությունը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար և դրա վերաբերյալ կանոնավորապես տեղեկացնել իր վստահորդին՝ պատասխանելով նրան հետաքրքրող հարցերին: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Հանձնաժողովը, հաշվի առնելով սույն կարգապահական վարույթի շրջանակներում Փաստաբանին վերագրվող վարքագիծը, անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետով նախատեսված պահանջների պահպանման մասով ապացուցման պարտականությունը կրում է հենց Փաստաբանը՝ առնվազն վստահորդի

կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում համապատասխան գործողությունները ժամանակին ձեռնարկելու մասով:

Կարգապահական գործի շրջանակներում Դիմողի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն արձանագրել է, որ Փաստաբանը **21.05.2022թ. ստանձնել է** Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը և իրեն տրված հանձնարարության շրջանակներում պետք է պետք է դիմեր գումարի բռնագանձման պահանջով առաջին ատյանի դատարան, սակայն Սարգիս Թադևոսյանին հասցեագրված **նախապահանջը 20.07.2022թ. ներկայացնելուց** հետո Փաստաբանն ըստ էության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան գումարի բռնագանձման պահանջի մասին **հայցադիմումը թիվ** (թիվ ՇԴ/1950/02/23 քաղաքացիական գործով) **ներկայացրել է 02.03.2023թ.** (նախապահանջը ուղարկելուց հետո՝ **8 ամիս անց**):

Բացի այդ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ թիվ ՇԴ/1950/02/23 քաղաքացիական գործով Փաստաբանը հայցադիմումին կից ներկայացրել է նաև միջնորդություն՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, որը **13.03.2023թ. որոշմամբ դատարանը մերժել է՝ վերադարձնելով Դիմողի հայցադիմումը**: Այսինքն, հայցադիմումը **դատարանի 13.03.2023թ. որոշմամբ** վերադարձվելու պահից մինչև պայմանագիրը 21.05.2022թ.-ին փաստացի լուծվելն ընկած ժամանակահատվածում, Փաստաբանն առնվազն պետք է միջոցներ ձեռնարկեր Դիմողի իրավունքների արդյունավետ պաշտպանության իրականացման ապահովման ուղղությամբ՝ մասնավորապես, կամ դատարանի նշված որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում առանց թերությունների կրկին ներկայացներ հայցադիմումը, կամ յոթնօրյա ժամկետում բողոքարկեր այն վերաքննության կարգով: Ավելին Փաստաբանը փաստացի չի ներկայացրել Դիմողի կողմից մատնանշված հանգամանքները հերքող որևիցե ապացույց, որն առերևույթ կվկայեր նրա կողմից հանձնարարության կատարման հետագա ընթացքի ապահովման փաստի մասին՝ նկատի ունենալով նաև, որ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում փաստացի չկա տեղեկություն թիվ ՇԴ/1950/02/23 քաղաքացիական գործի հետագա ընթացքի վերաբերյալ:

Անդրադառնալով պայմանագրի առարկա կազմող 2-րդ մասին, որի համաձայն Փաստաբանը՝ որպես Դիմողի ներկայացուցիչ քրեական շրջանակներում, պետք է բողոքարկեր նախաքննության կողմից կայացրած որոշումը, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանի կողմից սույն կարգապահական գործի շրջանակներում այդ մասով ևս չի ներկայացվել որևէ ապացույց, որը կվկայեր իր կողմից այդ մասով հանձնարարության կատարման ուղղությամբ որևէ գործողություն իրականացնելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետ՝ այդ թվում ժամանակային առումով գործադրման հետ՝ ուստի Փաստաբանի կողմից որևիցե գործողություն իրականացված չլինելու պայմաններում կամ դրանք ժամանակավրեպ իրականացնելու դեպքում հնարավոր չէ խոսել դրանց արդյունավետ կատարման մասին:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացրած

բացատրություններ և ապացույցները իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «տուգանք» տույժի տեսակը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 2-րդ մասի պահանջներով՝ Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանին (արտոնագիր՝ թիվ 944) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման համար:

2. Փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանի (արտոնագիր՝ թիվ 944) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-23014 կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.6.1 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշների մասով՝ կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23014-2-Ա
15 օգոստոսի 2023թ.
ք.Երևան